

Կ-1089-07.10.2016-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 25-ի ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 8-րդ հոդվածը լրացնելի հետևյալ բովանդակությամբ 11.1-րդ մասով.

«11.1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կառավարության կողմից սահմանված կարգով անցկացված մրցույթի արդյունքում ընտրված մասնագիտացված կազմակերպությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլատրում է իրականացնել բոլոր ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի եւ քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում եւ միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում՝ հատուկ ստեղծված կայքի (երի) միջոցով:

Տեսանկարահանումը պետք է իրականացվի անշարժ տեսախցիկների միջոցով: Տեսախցիկների տեսադաշտում պետք է լինեն քվեատուփը, տեղամասային կենտրոնն ու դրա մուտքը՝ մինչեւ 50 մետր շառավղով, ինչպես նաեւ ընտրողների գրանցման, քվեարկության ծրարների ու քվեաթերթիկների հատկացման եւ քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացները: Տեսանկարահանումը եւ համացանցային հեռարձակումը պետք է իրականացվեն սույն օրենսգրքով սահմանված՝ քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ:

Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողը եւ ընտրական հանձնաժողովները պարտավոր են աջակցել մասնագիտացված կազմակերպությանը տեսանկարահանման եւ համացանցային հեռարձակման գործընթացը կազմակերպելու հարցում, սակայն պատասխանատվություն չեն կրում գործընթացի կազմակերպման եւ դրա որակի համար:

Մասնագիտացված կազմակերպությունն ընտրական տեղամասում իրականացված տեսանկարահանված նյութերից պատճեններ՝ գրավոր դիմումի հիման վրա, տրամադրում է ընտրական հանձնաժողովներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին եւ դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպություններին՝ պատճենահանման ինքնարժեքի վճարման պայմանով: Դիմումը կարող է ներկայացվել մինչեւ Ազգային ժողով ընտրվելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ մինչեւ սահմանադրական դատարանի որոշում ընդունելը: Դիմումը պետք է ներառի այն ընտրական տեղամասի համարը, որի տեսանկարահանված նյութերից պահանջվում է պատճենը եւ դիմումի հետ պետք է ներկայացվի մասնագիտացված կազմակերպության կողմից սահմանված պահանջներին բավարարող էլեկտրոնային կրիչ:

Տեսանկարահանված նյութերը արխիվացվում են մասնագիտացված կազմակերպության կողմից եւ պահպանվում ընտրական փաստաթղթերի պահպանման համար սահմանված կարգով:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրելի հետևյալ խմբագրությամբ.

«Քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակները, բացառությամբ զորամասում, քրեակատարողական հիմնարկում եւ ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ընտրողների ստորագրված ցուցակների, հրապարակվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում «1-ին եւ 2-րդ կետերի պահանջները,» բառերից հետո լրացնել «կամ դիմումը ներկայացվել է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետների խախտմամբ,» բառերով:

**Հոդված 4.** Օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում`

1) «, իսկ քվեարկության արդյունքների ամփոփման նիստի ժամանակ սույն օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով` տեխնիկական սարքավորման միջոցով տպված տեղեկանքին» բառերը հանել.

2) վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքն ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների): Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելը արգելվում է:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում`

1) «իսկ քվեարկության արդյունքների ամփոփման նիստի ժամանակ սույն օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով` քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներին,» բառերը հանել.

2) վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքն ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից: Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելը արգելվում է: »:

**Հոդված 6.** Օրենսգրքի 35-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Սույն հոդվածով սահմանված դրույթները կիրառվում են նաեւ համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի թեկնածուի լիազոր ներկայացուցչի համար:»:

**Հոդված 7.** Օրենսգրքի 41-րդ հոդվածի`

1) 2-րդ մասում «լիազոր ներկայացուցիչները» բառերը փոխարինել «ընտրություններին մասնակցող կուսակցության, համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի թեկնածուի լիազոր ներկայացուցիչները» բառերով.

2) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Քաղաքացին միաժամանակ կարող է ընդգրկվել միայն մեկ ընտրական հանձնաժողովի կազմում, բացառությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի համար սույն մասում սահմանված դեպքի:

Քաղաքացին կարող է լինել միաժամանակ մեկից ավելի տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ, եթե սահմանված են ընտրությունների քվեարկության անցկացման տարբեր օրեր:»:

:

**Հոդված 8.** Օրենսգրքի 46-րդ հոդվածի 10-րդ մասից «տեխնիկական սարքավորման միջոցով տպված 68-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված տեղեկանքի կամ» բառերը հանել:

**Հոդված 9.** Օրենսգրքի 48-րդ հոդվածը`

1) 8-րդ մասում «9-15-րդ» թվերը փոխարինել «9-18-րդ» թվերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-18-րդ մասերով.

«16. Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն`

1) ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.

2) վստահված անձը.

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը,

4) քվեարկությանը չմասնակցած այն ընտրողը, ում տվյալների դիմաց, ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումն իրավասու անձը ներկայացնում է համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով` քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը` ժամը 11.00-ն:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումները պետք է ներկայացվեն առանձնացված` ըստ Հայաստանի Հանրապետությունից բացակայող եւ քվեարկությանը չմասնակցած եւ ըստ Հայաստանի Հանրապետությունում գտնվող եւ քվեարկությանը չմասնակցած անձանց:

Ընտրական հանձնաժողովը մերժում է այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումով վարչական վարույթի հարուցումը եւ դիմումն ըստ էության չի քննում, եթե դիմումը ներկայացվել է սույն մասի դրույթների խախտումով:

17. Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումը քննվում է «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչարարության հիմնարար սկզբունքների պահպանմամբ:

Հայաստանի Հանրապետությունից բացակայող անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումները քննելիս տարածքային ընտրական հանձնաժողովը`

1) ստուգում է դիմումում նշված անձի՝ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու փաստի վերաբերյալ տեղեկությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի կողմից օգտագործվող սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (այսուհետ՝ ՍԷԿՏ) համակարգի միջոցով:

Եթե ՍԷԿՏ համակարգի տվյալների հիման վրա պարզվում է, որ անձը, որի վերաբերյալ դիմում է ներկայացվել, Հայաստանի Հանրապետության սահմանը դեպի դուրս հատել է քվեարկությունը սկսվելուց հետո, ապա դիմումն այդ անձի մասով համարվում է առարկայազուրկ եւ վարչական վարույթն այդ մասով կարճվում է:

Եթե ՍԷԿՏ համակարգի տվյալների հիման վրա պարզվում է, որ անձը, որի վերաբերյալ դիմում է ներկայացվել, Հայաստանի Հանրապետության սահմանը չի հատել կամ վերջին անգամ հատել է Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելիս, ապա դիմումը այդ անձի մասով համարվում է առարկայազուրկ եւ վարչական վարույթն այդ մասով կարճվում է:

2) պարզում է, արդյոք անձը, որի վերաբերյալ դիմում է ներկայացվել, գրանցվել է տեխնիկական սարքավորման միջոցով:

3) տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված եւ նույնականացման քարտ ունեցող ընտրողի դեպքում ստուգում է նաեւ, թե արդյոք գրանցման ժամանակ հանձնած մատնահետքը համընկնում է ոստիկանության կողմից վարվող նույնականացման քարտերի էլեկտրոնային շտեմարանում առկա այդ ընտրողի մատնահետքին:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումների ստուգումների կազմակերպման գործում տարածքային ընտրական հանձնաժողովի պահանջով կարող են ներգրավվել ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը եւ ըստ անհրաժեշտության այլ մարմիններ:

Եթե չկան տվյալ անձի կողմից քվեարկությանը մասնակցությունը հաստատող բավարար ապացույցներ, ապա հավաստիության կանխավարկածի սկզբունքի կիրառմամբ, բացառապես ընտրությունների արդյունքներով որոշում կայացնելու համար համարվում է, որ տեղի է ունեցել այլ անձի փոխարեն քվեարկություն:

Անկախ տարածքային ընտրական հանձնաժողովում դիմումի քննության ընթացքից բոլոր դիմումներն ուղարկվում են նաեւ համապատասխան իրավապահ մարմին:

18. Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումին պետք է կցված լինի որեւէ անձի աներկբա հայտարարությունն այն մասին, որ ընտրողը քվեարկությանը չի մասնակցել եւ այդ ընտրողի փոխարեն քվեարկել է այլ անձ:

Հայտարարություն տվողը պետք է նաեւ գրավոր հավաստի եւ ստորագրի, որ տեղյակ է այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Հայտարարությունը պետք է պարունակի հայտարարություն տվողի անունը, հայրանունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը (անձնագրի դեպքում սերիան եւ համարը), հաշվառման վայրի հասցեն, բնակության վայրի հասցեն, եթե տարբերվում է հաշվառման վայրի հասցեից, հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն, հայտարարության տրման ամսաթիվը: Հայտարարության մեջ պետք է նաեւ նշված լինեն քվեարկությանը չմասնակցած ընտրողի անունը, հայրանունը, ազգանունը, ընտրական տեղամասի համարը, որ ցուցակի

ընտրող է, ընտրողի համարը համապատասխան ցուցակում: Հայտարարությունը ներկայացվում է բնօրինակով՝ ստորագրված բացառապես հայտարարություն տվող անձի կողմից:

Դիմում ներկայացնողը պետք է գրավոր հավաստի եւ ստորագրի, որ տեղյակ է այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դիմումին կից կեղծ ստորագրությամբ հայտարարություն ներկայացնելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Հայտարարությունը համարվում է կեղծ ստորագրությամբ հայտարարություն, եթե այն ստորագրվել է ոչ այն անձի կողմից, ում անունից տրվում է հայտարարությունը, կամ ստորագրվել է մտացածին անձի անունից: Սույն պարբերությամբ սահմանված պահանջը չի տարածվում այն դեպքի վրա, երբ դիմումը ներկայացնողը եւ հայտարարություն տվողը նույն անձն են:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումը ներկայացվում է բնօրինակով՝ ստորագրված բացառապես դիմումատուի կողմից: Դիմումը պետք է պարունակի դիմողի անունը, հայրանունը, ազգանունը, հաշվառման վայրի հասցեն, բնակության վայրի հասցեն, եթե տարբերվում է հաշվառման վայրի հասցեից, հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն, կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի տրման ամսաթիվը: Սույն հոդվածի 16-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված սուբյեկտների կողմից ներկայացված դիմումներին կից պետք է ներկայացվի նաեւ դիմումատուի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճենը:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումի, հայտարարության ձեւերը, ինչպես նաեւ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին սուտ հայտարարություն տալու եւ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումին կից կեղծ ստորագրությամբ հայտարարություն ներկայացնելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին տեղեկացված լինելու ձեւաթղթերը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը եւ ներբեռնելու հնարավորությամբ տեղադրում հանձնաժողովի համացանցային կայքում:

Դիմումին կից պահանջվող փաստաթղթերի բացակայության դեպքում կամ դիմումի կամ հայտարարության համար սույն մասով սահմանված վավերապայմաններին չհամապատասխանելու դեպքում դիմումով վարչական վարույթի հարուցումը մերժվում է: Եթե նույն անձը ներկայացրել է այլ անձի փոխարեն քվեարկելու մասին մեկից ավելի դիմումներ կամ մեկ դիմումում նշված են այլ անձանց փոխարեն քվեարկելու վերաբերյալ մեկից ավելի անձանց տվյալներ, եւ ստուգման ընթացքում պարզվում է, որ դիմումին կցված է այլ անձի փոխարեն քվեարկելու մասին առնվազն մեկ սուտ հայտարարություն կամ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին առնվազն մեկ կեղծ ստորագրությամբ հայտարարություն, ապա այդ անձի ներկայացրած դիմումների հետագա քննարկումը դադարեցվում է, վարչական վարույթը կարճվում է, եւ բոլոր նյութերը ներկայացվում են համապատասխան իրավապահ մարմին: Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ մինչ այդ ստուգված եւ ճշտված տեղեկությունները հաշվի են առնվում ընտրությունների արդյունքներով որոշում կայացնելու համար»:

**Հոդված 10.** Օրենսգրքի 50-րդ հոդվածի 14-րդ մասից հանել «՝ առանց դրանք լուսապատճենահանելու, լուսանկարելու եւ տեսանկարահանելու իրավունքի» բառերը:

**Հոդված 11.** Օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությունում «ստղը» բառից հետո լրացնել «, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում» բառերով:

**Հոդված 12.** Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 2-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ

«ընտրողների ցուցակում ընտրողների ստորագրությունների հիման վրա հաշվում է քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը».

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

«3) եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորման միջոցով տպում է տեղեկանք, որում նշվում են տարածքային ընտրական հանձնաժողովի եւ ընտրական տեղամասի համարները, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Տեղեկանքը պետք է պարունակի նշում այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղծաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով:

Տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում այդ մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:

Տեղեկանքի մեկ օրինակը ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից եւ կնքված հանձնաժողովի կնիքով տեղադրվում է պարկում:

Տեղեկանքի մեկական օրինակ, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից եւ կնքված հանձնաժողովի կնիքով, ըստ պահանջի տրամադրվում է ամփոփման նիստին ներկա գտնվող թեկնածուներին, դիտորդներին եւ ընտրություններին մասնակցող կուսակցության մեկական վստահված անձի:

Ընտրողների ցուցակները (բացառությամբ գորամասում, քրեակատարողական հիմնարկում եւ ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ընտրողների ստորագրված ցուցակների) փաթեթավորվում են, փաթեթը կնքվում է եւ ստորագրվում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի եւ քարտուղարի կողմից եւ տարածքային ընտրական հանձնաժողով է ներկայացվում սույն օրենսգրքի 71-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով: Ջորամասում, քրեակատարողական հիմնարկում եւ ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ընտրողների ստորագրված ցուցակները փաթեթավորվում են առանձին, փաթեթը կնքվում է եւ տեղադրվում պարկում. »:

**Հոդված 13.** Օրենսգրքի 71-րդ հոդվածի 9-րդ մասը «պարկը» բառից հետո լրացնել «ընտրողների ցուցակների փաթեթը,» բառերով:

**Հոդված 14.** Օրենսգրքի 73-րդ հոդվածը.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ մասով.

«3.1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը` ժամը 12.00-ից սկսած իրականացնում է ընտրողների ցուցակների սկանավորում, որին կարող են հետեւել ընտրական հանձնաժողովների անդամները, թեկնածուները, վստահված անձինք, դիտորդները եւ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Ընտրողների ցուցակները սկանավորվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով եւ չափորոշիչներին համապատասխան այնպես, որ տվյալ ընտրական

տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, հաշվառման վայրի հասցեն, ինչպես նաև ընտրողի ստորագրության, ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամի անհատական կնիքի համար նախատեսված սյունակները լինեն տեսանելի:

Ընտրողների սկանավորված ցուցակները, ոչ ուշ, քան սկանավորման աշխատանքները սկսվելուց 24 ժամ հետո պաշտոնապես հրապարակվում եւ ներբեռնելու ու, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:»:

**Հոդված 15.** Օրենսգրքի 74-րդ հոդվածի 9-րդ մասում «որոշման օրինակները երկօրյա ժամկետում» բառերը փոխարինել «ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշման օրինակները հնգօրյա ժամկետում» բառերով:

**Հոդված 16.** Օրենսգրքի 118-րդ հոդվածի 7-րդ մասում «ընտրության մասին որոշումն ընդունելուց հետո՝ երկօրյա ժամկետում, այն ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով եւ մարզպետին» բառերը փոխարինել «ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ հնգօրյա ժամկետում ներկայացնում է մարզպետին» բառերով:

**Հոդված 17.** Օրենսգրքի 119-րդ հոդվածի 8-րդ մասում «ընտրության մասին որոշումն ընդունելուց հետո՝ երկօրյա ժամկետում, այն ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով եւ մարզպետին» բառերը փոխարինել «ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ հնգօրյա ժամկետում ներկայացնում է մարզպետին» բառերով:

**Հոդված 18.** Օրենսգրքի 141-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ պարբերությունով.

«Երեւանի ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրությունը՝ հնգօրյա ժամկետում, ուղարկվում է վարչապետին, իսկ Գյումրու եւ Վանաձորի ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրությունը՝ համապատասխան մարզպետին:»:

**Հոդված 19.** Սույն օրենքի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, եւ 8-14րդ հոդվածների դրույթները կիրառել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ Ազգային ժողովի առաջին ընտրություններից սկսած:

**Հոդված 20.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐԿԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

h/h	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	3
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Լ. Զուրաբյան (ՀԱԿ խմբակցություն)	1.Օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի վերջին նախադասությունում «քաղվածքներ» բառից հետո լրացնել «և նշումներ» բառերը:	Ընդունված է Ներկայացվել է հետևյալ շարադրությամբ.  «2) վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքն ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների): Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելը արգելվում է:»:
		2.Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վերջին նախադասությունում «քաղվածքներ» բառերից հետո լրացնել «և նշումներ» բառերը, իսկ փակագծերից հետո դրված բուլբ լիգատուրայով ստորակետով:	Ընդունված է Ներկայացվել է հետևյալ շարադրությամբ. «2) վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքն ինքնուրույն կատարելու քաղվածքներ և



			<p>նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից: Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելը արգելվում է:»:</p>
		<p>3.Օրենսգրքի 41-րդ հոդվածի 6-րդ մասում «միաժամանակ» բառը փոխարինել «նույն ընտրություններում» բառերով:</p>	<p>Ընդունված է Ներկայացվել է հետևյալ շարադրությամբ.  «2) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.  «6. Քաղաքացին միաժամանակ կարող է ընդգրկվել միայն մեկ ընտրական հանձնաժողովի կազմում, բացառությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի համար սույն մասում սահմանված դեպքի:  Քաղաքացին կարող է լինել միաժամանակ մեկից ավելի տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ, եթե սահմանված են ընտրությունների քվեարկության անցկացման տարբեր օրեր:»:</p>
		<p>4.Օրենսգրքի 48-րդ հոդվածի առաջարկվող նոր՝ 16-րդ մասի 1-ին կետում «կուսակցության լիազոր</p>	<p>Ընդունված չէ,  քանի որ օրենսգրքում սուբյեկտային</p>

		ներկայացուցիչը» բառերից հետո լրացնել «Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուն» բառերը:	կազմերի նկատմամբ ընդունված է միասնական մոտեցում:
		5.Օրենսգրքի 48-րդ հոդվածի առաջարկվող նոր՝ 16-րդ մասի 2-րդ պարբերությունում «Ժամը 12:00-ից» բառերը փոխարինել «Ժամը 09:00-ից» բառերով:	Ընդունված չէ, քանի որ քվեարկությունից հետո ամբողջ գիշեր հանձնաժողովները զբաղված են փաստաթղթերի և քվեարկության պարկերի ընդունմամբ /տևում է մինչև առավոտյան 10.00/, աղյուսակավորման կատարմամբ, որը խիստ պատասխանատու և լարված աշխատանք է, ապա վերջիններիս տրվում է մի քանի ժամ ժամանակ հանգստանալու համար և ժամը 12.00-ից սկսվում է ինչպես այդ, այնպես էլ բոլոր տեսակի դիմումներ ներկայացնելու ժամկետը:
		6.Օրենսգրքի 48-րդ հոդվածի առաջարկվող նոր՝ 18-րդ մասի 1-ին պարբերությունում «աներկբա» բառը հանել, իսկ «ընտրողը» և «ընտրողի» բառերից հետո փակագծերում լրացնել «ընտրողները» և «ընտրողների» բառերը	Ընդունված չէ, քանի որ, եթե ձևակերպումը պարունակում է եզակի շարադրանք, ապա ըստ Իրավական ակտերի մասին օրենքի այն ենթադրում է նաև հոգնակի, իսկ աներկբա բառը հստակություն է տալիս համապատասխան իրավադրույթին:
		7.Ստորագրված Համաձայնագրին համապատասխանեցնելու նպատակով, Օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ պարբերության վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետներն ընտրվում են թեստավորման արդյունքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով»:	Ընդունված չէ, քանի որ, այդ կարգը ըստ օրենսգրքի սահմանվելու է ԿԸՀ կողմից:
		8.Ստորագրված Համաձայնագրին համապատասխանեցնելու նպատակով, Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի նոր խմբագրությամբ 3-րդ	Ընդունված չէ, քանի որ, օրենսգրքի նույն հոդվածում առկա է ունիվերսալ բնույթի իրավանորմ

		կետի 5-րդ պարբերությունը, 1-ին նախադասությունից հետո, լրացնել նոր նախադասությամբ, հետևյալ խմբագրությամբ. «Փաթեթի վրա կարող են ստորագրել նաև վստահված անձինք, հանձնաժողովի մյուս անդամները»:	և նրանք արդեն իսկ ունեն իրավունք ստորագրելու ցանկացած, այդ թվում՝ նշված փաթեթների վրա:
		9.Ստորագրված Համաձայնագրին համապատասխանեցնելու նպատակով, Օրենսգրքի 73-րդ հոդվածի նոր 3.1-րդ մասի վերջին պարբերությունը «որոնման» բառից հետո լրացնել «և տպագրման» բառերով	Ընդունված է, քանի որ, նախագծի դրույթի համաձայն այդ ցուցակները պետք է հրապարակվեն ներբեռնման հնարավորությամբ, ինչը նշանակում է, որ դրանք կարելի է ներբեռնել, ուստի և տպագրել:
		10.Քրեական Օրենսգրքի առաջարկվող նոր 154 <sup>7</sup> -րդ հոդվածի վերնագրում և դիսպոզիցիայում «գրանցման տեխնիկական սարքավորումը» բառերից հետո լրացնել «տեսախցիկները և դրանք սնուցող համակարգերը» բառերը, իսկ «հափշտակելը» բառից հետո ավելացնել «կամ դիտավորությամբ վնասելը» բառերը:	Ընդունված է հոդվածի դիսպոզիցիան «գրանցման տեխնիկական սարքավորումը» բառերից հետո լրացվել է «կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից տեղադրված տեսախցիկը,» բառերով
2.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Լ. Ջուրաբյան (ՀԱԿ խմբակցություն) Ա. Ռուստամյան (ՀՅԴ խմբակցություն) Վ. Բաղդասարյան (ՀՀԿ խմբակցություն) Ն. <a href="#">Զոհրաբյան</a> (ԲՀԿ խմբակցություն) Հ. Բիշարյան (ՕԵԿ խմբակցություն)	1. Քրեական Օրենսգրքի առաջարկվող նոր 154 <sup>8</sup> -րդ հոդվածի առաջին մասի դիսպոզիցիան «վերաբերյալ» բառից հետո լրացնել «դիտավորությամբ» բառով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
		2. Քրեական Օրենսգրքի առաջարկվող նոր 154 <sup>8</sup> -րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր երկրորդ մասով՝ «Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ անփութությամբ սուտ հայտարարություն տալը պատժվում	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն

		է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ ազատագրկմամբ՝ մինչև երկու տարի ժամկետով:»:	
--	--	--	--